

1898

U - 76

Lucy

197 J

316

200

ЛАЗАРЕВСКИЙ ИНСТИТУТ
УЧЕНИЧЕСКАЯ БИБЛИОТЕКА
ВОСТОЧНЫХ ЯЗЫКОВ

516

half

264

Q-76

197

Лиц

216

197

ЛАЗАРЕВСКАЯ ИСТОРИЧЕСКАЯ

УЧЕНИЧЕСКАЯ БИБЛИОТЕКА

* ВОСТОЧНАЯ *

ԱՍՏՈՒԾՈՅ ՏԱԴԱՐԱ

ազատ թարգմ.

Պ.-Ք. Տ.-Ց.

167

— 60 —

գործի

Տպարան Ա. Մ. Մահմետ-Յակոբիանցի

Տիպոգրիա Ա. Մ. Մյուդյուսակովա.

1898



42418 - 4-2.

ԱՍՏՈՒԹՈՅ ՏԵՇԱԲԻԼ

Մարդս ստեղծուած է Աստուծուց, հետևաբար
բոլոր մարդիկն էլ Աստուծոյ որդիքն են, իսկ Աս-
տուած նորանց հայրը: Մենք տեսնում ենք, որ առ-
հասարակ մեզանում, բոլոր ընտանիքներում, երե-
խաները, առանց հօրը չեն կարողանում կառավարուիլ
և միշտ նորա օգնութեանն ու աջակցութեանն են
դիմում: Այսպէս էլ բոլոր մարդիկը, ինչպէս Աս-
տուծոյ որդիք, չեն կարողանում առանց հրենց Հօր-
Աստուծու կառավարուիլ և միշտ նորան են դիմում
օգնութիւն խնդրելով: Դորանց դիմումները լինում
են աղօթքներով: Ինքը, մեր Տէր Յիսուս Քրիս-
տոսն էլ պատուիրեց մարդկանց աղօթելու և նորանց
սովորեցրեց այս աղօթքը: «Հայր մեր, որ երկնքումն
ես, սուրբ լինի քո անունը՝ Ապէն»: Դէպի Աստուած
ուղղած աղօթքները լինում են երկու տեսակ. առանձ-
նական և հրապարակական: Առանձնական աղօթք-
ներ կոչւում են նորանք, երբ մարդիկ աղօթում են
Աստուծուն առանձնութեան մէջ, միայնակ: Այդ

Дозволено цензурою. Тифлисъ, 4 июня 1898 года.



(5416)
38

(26033-6)

28-196

197-2001

աղօթքները կոչւում են, նաև մասնաւոր, որովհետև
մարդիկ առանձնութեան մէջ, իրենց տներում, շատ
յաճախ են Աստուծուն աղօթում: Իսկ Հրապարակա-
կան աղօթքները կոչւում են նորանք, երբ մարդիկ
ընդհանուր հասարակութիւնով ժողովուում են մի որ
և է տեղ և աղօթում բոլորը միասին: Առանձնական
աղօթքներ մարդիկ կարողանում են ամեն տեղ էլ
կատարել, որտեղ էլ որ լինի: Աղօթում են նորանք
տանը գիշերը, կամ առաւօտեան, կամ քնից զարթ-
նելով: Աղօթումեն երբեմն դաշտերում վարուցանք
սկսելուց առաջ, կամ յետով, աղօթում երբեմն ան-
տառներում, ճանապարհում և առհասարակ ամեն
տեղ, որտեղ որ իրենք գտնուում են: Շատ անգամ
վտանգ պատահած ժամանակ էլ մարդ ակամայից
ինքն իրան խաչակնքում է և աղօթում: «Տէր փըր-
կիր ինձ փորձութիւնից, կամ Հրաժարիմքն» ասում:
Առանձին աղօթելու եղանակը ցոյց տուաւ ինքը մեր
Տէր Յիսուս Քրիստոսը: Նա երբեմն ժողովրդից հե-
ռանում էր և գնում անապատը և այնտեղ ամբողջ
գիշերնելով աղօթում: Շատ անգամ նա աղօթում էր
պարակում, լեռների վերայ և այլն: Նա միայնակ
աղօթելով՝ ալդպիսով սովորեցրեց և ուրիշներին
միայնակ աղօթելու, նա ինքն ասաց: «Երբ աղօ-
թում ես, մտիր քո սենեակդ և փակելով քո դռնե-
րը, աղօթիր քո Հօրդ»¹⁾: Իսկ Հրապարակական

1) Մատթ. գլ. Ժ. 6

աղօթքն ուրիշ է: Հրապարակական աղօթքը կատար-
ւումէ այն ժամանակ, երբ ամբողջ հասարակու-
թիւնը կամ ժողովուրդը ժողովուած է լինում մի
տեղ: Նա, Հրապարակական աղօթքը, շատ բարձր
է կանգնած առանձնականից, կամ մասնաւոր աղօթք-
ներից, որովհետև Հրապարակական աղօթքով, ժո-
ղովուրդը միասին է աղօթում, միմիանց և առ հա-
սարակ բոլորի համար, որպէս իրենց հարազատ
եղբօրց: Հրապարակական աղօթքով երեսումէ մարդ-
կանց միմիանց հետ ունեցած անհուն սէրը, հէնց
այդ բանն էլ իսկապէս Աստուծոյ ցանկութիւննէ:
Այդ սկատճառաւ Աստուած Հրապարակական աղօթ-
քին վերաբերում է, կամ ընդունում մի առանձին
հաճութիւնով, որովհետև Յիսուս-Քրիստոս ասում
է. «Որտեղ երկուսը կամ երեքը ժողովուած են իմ
անունով, ես այնտեղ նորանց մէջն եմ»: ¹⁾ Յիսուս-
Քրիստոս ինքն էլ շատ անգամ ալցելեց Հրէաների
աղօթատները—ժողովարանները: Նա եղել է Նա-
զարէթի ²⁾, Կափառնայումի ³⁾ և ուրիշ տեղերի ժո-
ղովարաններում: Հրապարակական աղօթքներն էլ
այնպէս են, ինչպէս առանձնականը, այնպէս որ
Հրապարակական աղօթքներն էլ կարելի է կատարել
նաև տներում, դաշտերում, լեռների վերայ և առ-

1) Մատթ. գլ. Ժ. 20

2) Պուկ. գլ. Դ. 16 և ուրիշները

3) Մարկ. գլ. Ա. 21 և ուրիշները

Հասարակ ալն տեղերում, որտեղ Տիրոջ անունով ժողովւում է բոլոր հասարակութիւնը։ Շատ անգամ պատահում է, որ հրապարակական աղօթքներ կատարւում է դաշտերում, երբ ժողովուրդը կամ հասարակութիւնը ժողովուած միասին խնդրում է Աստուծուց անձրես գալ, կամ մարախը, թրթուրը, մկները և այլ վնասակար միջատները ոչնչացնելու, որոնք վնասում են իրենց հացալին բոյսերին։ Երբեմն հրապարակական աղօթքներ կատարւում է քաղաքների կամ գիւղերի հրապարակներում, կամ փողոցներում, երբ ժողովուրդը լնդհանուր կազմութիւնով և թափորով խնդրում է Աստուծուց վերջ դնել վարակիչ ցաւին—մահ—տարաժամին, կամ ազատել մօտակայ տեղերում բանակ դրած թշնամիների յարձակումներից, կամ երբ շնորհակալութիւն են մատուցանում Աստուծուն, իրեն մարդկանց շնորհած ողորմութիւնների համար։ Հրապարակական աղօթքները կատարւում է նաև ձախնաւոր, երբ շարականներ, սաղմոսներ և երգեր են երգում, իսկ լնդհանրապէս և ամենից առաւել մարդիկ հրապարակական սողօթքներ կատարելու համար ժողովւում են առանձին առանձին տներ, որ իրենց աղօթատներն են կոչւում։ Այդ տներին մենք Աստուծոյ տուն ենք կոչում, եկեղեցի կամ Աստուծոյ տաճար, որովհետեւ նորանց մէջ են ժողովւում աղօթելու համար ամբողջ հասարակութիւնը կամ ժողովուրդը,

որոնցից և կազմուում է Քրիստոսի եկեղեցին։ Տաճարը հրեաներն էլ ունեին, Երուսաղէմ քաղաքում։ Յիսուս այդ տաճարն էլ գնաց։ Առաջին անգամ Յիսուս այցելեց այդ տաճարը զատկական տօներին, երբ նա 12 տարեկան էր, յետոյ երբ նա դուրս եկաւ քարոզելու։ Նա իւր առաքեալների հետ տաճարը գնաց ոչ թէ մի անգամ, այլ շատ, ինչպէս երեսում է Ս. Աւետարանից։

Քրիստոսի համբարձումից հետոյ, նորա առաքեալները շարունակեցին այցելել Երուսաղէմի տաճարը, բայց որովհետեւ նորանք Քրիստոսի հետեղներն էին, այդ պատճառաւ Մովսիսական օրէնքի նախանձախնդիրները սկսեցին նորանց հետեւիլ և հալածել։ Օրինակ մի անգամ Պօղոս առաքեալին ուժով դուրս հանեցին տաճարից և ծեծեցին¹⁾։ Առաքեալներն ակամալից ստիպուեցան թողնել Երուսաղէմի տաճարը և այնուհետև միւս քրիստոնեանների հետ ժողովուել մասնաւոր տները և հասարակական եղբարական աղօթքներ կատարել։ Մեռան, կամ աւելի ճիշդն ասած նահատակուեցան առաքեալները, իսկ քրիստոնեաններն իրենց առաքեալների յաջորդող հովիւներով դարձեալ շարունակեցին ժողովուել տներում և Աստուծալաշտական աղօթքներ կատարել։ Սկզբներում քրիստոնեանները տաճարներ կամ եկեղեցիներ չունեին, որովհետեւ թէ քաղաքներում և

1) Կործք առաք. գլ. Խ

թէ գիւղերում քրիստոնեաների թիւը դեռ այնքան շատ չէին, ինչպէս ալժմս է, նորանք քիչ էին և նիւթական ոլժ չունէին սեպհական աղօթատներ կամ տաճարներ կառուցանելու, իսկ ալդ ժամանակներում քրիստոնեաների դէմ սկսուեցաւ մի ընդհանուր հալածանք, որ որտեղ քրիստոնեալ էին տեսնում, բռնում էին չարչարում, նեղացնում և ապա նահատակում, միայն նորա համար, որ հետեւում էին Քրիստոսին և հաւատում նորան: Այնուհետև շատ դժուար էր քրիստոնեաների համար այլևս միասին ժողովուել տներում և աղօթքներ կատարել: Նորանք փախան անտառները, լեռները, ձորերը և գետնափոր խրճիթներում դարձեալ ծածուկ կատարում իրենց աղօթքները, իսկ երբ, մի քանի ժամանակից յետոյ, դադարեցին քրիստոնեաներին հալածելը և թոլատրեցին նորանց զերդառնալ իրենց բնակարանները և հանգստանալ, այնուհետև նորանք սկսեցին իրենց ոլժերի համապատասխան կառուցանել և սեպհական տաճարներ, վայելուչ կերպով զարդարելով և ծաղկեցնելով նորանց:

Հայաստան աշխարհում առաջին անգամ, Քրիստոսից յետոյ 32 թւում քրիստոնէութիւն ընդունեց Հայոց Սբգար թագաւորը: Քրիստոնէութիւնը Հայաստանում տաճածողներն էին Թագէոս և ապա Բարդողիմէոս առաքեալները: Դորանք Հայաստանի

բոլոր կռատունները կործանեցին և գորանց տեղ հիմնեցին Աստուծոյ եկեղեցին: Ինչպէս ամեն տեղ հալածում և նահատակում էին քրիստոնեաները, նոյնը շարունակւեց և Հայաստան աշխարհում: Աբգարի մահից յետոյ, նորա յաջորդները կործանեցին բոլոր եկեղեցիները և սկսեցին հալածել և կոտորել քրիստոնեաներին, որտեղ որ պատահում էին: Աբգարի յաջորդները չը բաւականացան միայն քրիստոնեաներին հալածելով, և կոտորելով, այլ և նահատակել տուին Թագէոս և Բարդուղիմէոս առաքեալներին: Այսպիսով Հայաստան աշխարհում էլ քրիստոնեանների դէմ հալածանքը շարունակուեց մինչև Ս. Գրիգոր Լուսաւորչի օրը, որ նորից քրիստոնէութեան ջերմն պաշտպան հանդիսացաւ: Այնուհետև Հայաստանում էլ շարունակ քրիստոնեանները, որտեղ որ կալին, շարունակ եկեղեցիներ կառուցըին և աղատ կատարեցին իրենց Աստուծածպաշտական օրէնքները: Հենց այդ ժամանակներում էլ, 302 թուին, կառուցըին Ս. Էջմիածնի հոյակապ վանքը, և այժմ մեր Հայրապետների աթոռն ախտեղ է: Այժմ մենք էլ ահա շարունակում ենք այն Աստուծածահաճոյ գործը, որ ահա հազար ինն հարիւր տարուց առաջ կատարել են մեր հանգուցեալ առաջին քրիստոնեալ եղբայրները: Այժմ էլ մեզանում, որտեղ որ կան ճշմարիտ հաւատացեալ եղբայր քրիստոնեաններ, ունին տաճարներ, որտեղ ամենքը միասին ժողով-

ւում են և կատարում իրենց քրիստոնէական պարտքը, քնդհանրական աղօթքները։ Այժմեան մեր տաճարներն էլ կառուցւում են այնպէս, ինչպէս հին ժամանակներում։ Այսինքն, որ տաճարը բաժանում է երեք մասերի, բեմ, որտեղ սեղանն է շինուած և անմահ պատարագն է մատուցւում, ատեան, որտեղ հոգեորականութիւնը կատարում է սովորական ժամերգութիւնը, ապա ժողովրդանոցը, որտեղ ժողովուրդն է կանգնում և կատարում իւր աղօթքը։

Ամեն տեղ էլ Աստուած կալ։ Զըկայ մի այնպիսի տեղ, որտեղ Աստուած չը լինի, սակայն նա առանձնապէս լինում է այն տեղերում, որտեղ մարդիկ ժողովուած են լինում միասին կատարելու իրենց աղօթքները, ինչպէս ասում է և մեր Տէր Յիսուս Քրիստոսը. «Որտեղ ժողովուած են երկուսը կամ երեքը իմ անունով, այնտեղ ես նորանց մէջն եմ»։ Հետևաբար տաճարներում, որտեղ մարդիկ միասին ժողովուում են աղօթելու, Աստուած առանձնապէս աւելի մօտ է նորանց։ Այդ պատճառաւ, ով յանկանում է Աստուծուն աւելի մօտ լինել, նա պիտի միշտ Աստուծոյ տաճարը գնայ աղօթելու։ Աստուծոյ տաճարը յաճախակի այցելելը մարդու հոգու համար մէծ փրկութիւն է, որովհետև այնտեղ Ս. Հայրապետների յօրինած շարականներն ու երգերն են երգում, աղօթքներ, սաղմոսներ և աւետարաններ կարդում և այլ շատ ընթերցուածներ։ Լսելով այդ շարական-

ները, աղօթքները, սաղմոսները, աւետարանի և այլ շատ ընթերցուածներ. մենք սովորում ենք և վարժուում, թէ ի՞նչպէս պէտք է հաւատալ Աստուծուն և ինչպէս ապրել այս աշխարհում, որ հաճելի լինինք Աստուծուն։ Բացի գորանցից տաճարում, իւր ներկայութիւնով՝ Աստուած իւր ողորմութիւնով ապաշխարութեան և Ս. Հաղորդութեան խորհրդների միջոցով՝ լուսաւորեցնում է մարդուն և ոյժ ու կարողութիւն տալիս, որ կարողանայ կռուել չարութեան ու մարդկային թուլութիւնների դէմ։ Այսպիսով Աստուծոյ տաճարում, քահանայի միջոցով ապաշխարութեան և խոստովանութեան խորհրդով ներւում է մարդու մեղքերը։ Հաղորդութեան խորհրդով՝ մարդ մօտենում է Յիսուս-Քրիստոսին, ինչպէս և ինքը խոստացաւ մարդկանց ասելով. «Եթէ Որդւոյ Մարդոյ մարմինը չուտէք և նորա արիւնը չը խմէք, կեանք չունիք ձեր անձեռումը, իմ մարմինն ուտողը և իմ արիւնը խմողը յաւիտենական կեանք ունի և ես յետին օրումը կը յարուցանեմ նորան։ Վասն զի իմ մարմինը ճշմարտապէս կերակուր է և իմ արիւնը ճշմարտապէս խմելիք է։ Իմ մարմինն ուտողը և իմ արիւնը խմողը մնում է ինձանում և ես նորանում։ Ինչպէս ինձ ուղարկեց կենդանի Հայրը և ես կենդանի եմ Հօր համար, այնպէս էլ նա, որ ինձ ուտում է, կենդանի կը լինի ինձ համար։ Ամուսնութեան

խորհրդով մարդ օրհնութիւն է ստանում ընտանեկան կեանք վարելու: Վերջապէս մարդու մեռնելուց յիշոյ, նորան տաճար են տանում և այնտեղ կարգ կատարում, նորա հոգուոյ համար սուրբ պատարագ մատուցանում և Աստուածանից, որ ներկայ է տաճարում, նորա մեղքերի համար թողութիւն խնդրում: Մի խօսքով Աստուծոյ տաճարը յաւիտենական կեանքի մեր ուղղեցոյցն է: Այնտեղից է դուրս դալիս այն բոլորը, ինչ որ հարկաւոր է մարդու հոգւոյ փրկութեան հոմար:

Որովհետեւ Աստուծոյ տաճարը, յաւիտենական երջանիկ կեանքը գնալու համար, մեր ուղղեցոյցն է, այդ պատճառաւ ամեն մի քրիստոնէի վերայ մի առանձին պարտք կայ տաճարը գնալու և Աստուծուն աղօթելու և փառաբանելու: Պողոս առաքեալն ասում է, որ Աստուածապաշտութիւնը ամեն բանումն էլ օգտակար է մարդուն: Նա մարդկանց բարութիւն է անում, ոչ թէ միւս կեանքում, այլ և ներկայի¹⁾: Աստուածապաշտ քրիստոնեան, ճշգութիւնով Աստուծոյ տաճարը յաճախողը, անկասկած յաւիտենական կեանքի բարիքներ կը ստանայ, որովհետեւ տաճարը նորան սովորեցնում է անել այն, ինչ որ հարկաւոր է յաւիտենական կեանքը գնալու համար և նորան տանում է գէպի յաւիտենական երջանկութիւնը, բացի գորանից, Աստուծոյ տաճարը այդպի-

1) Ա. Տիմոթ. գլ. Դ. 8

սի մարդուն տալիս է և երկրալին բարիքներ: Տաճարում ներկայ է լինում Աստուած: Նորան հաճելի է, որ իւր մօտ, իւր տունն են գալիս, իւր որդիքը, ինչպէս գէպի իրենց հայրը: Նորան հաճելի է, որ իւր այդ որդիքը իրեն լիշում են և չեն մոռանում, ցոյց են տալիս նորան իրենց որդիական պարտքը: Եւ ահա Աստուծոյ տաճարը ջանասիրութիւնով յաջախողները, գորա համար, Աստուածանից ստանում են ողորմութիւններ և շատ բարիքներ, շատ անգամ և առանց իրենց կողմից նորանից բան խընդրելու: Այդպիսի մարդկանց համար շատ անգամ Աստուծոյ տաճարը գառնում է գորանց աշխարհային ձախորդութիւններից և վտանգներից ազատող ապաստաբան: Այդ մասին պատմում է հետևեալը. «Ապրում էր մի աղքատ մարդ իւր կնոջ և որդու հետ: Այն երկրում, որտեղ ապրում էր այդ ընտանիքը, մի անգամ սաստիկ սով ընկաւ: Հայրը տեսնելավ, որ ամենքն էլ սովից պիտի մեռնեն, ասում է որդուն. «Սիրելի որդի, որդէս-զի սովից ազատենք մեր կեանքը, մնում է միայն մի բան անել, այս-ծախել քեզ, որպէս գերիի մի որ և է հարուստ մարդու վերայ: Համաձա՞յն ես դու այս բանին: Հայր կատարի՛ր, ինչ որ ուզում ես, ես ամեն բանի պատրաստ եմ, սատասիանեց որդին: Հայրը արտասուքն աչքերին իւր որդուն տարաւ մի հարուստ մարդու մօտ և ծախեց նորա վերայ: Մնաս բարեաւ

ասելու ժամանակ, հայրն ասաց իւր որդուն. որդեակս, ահա քեզ եմ աւանդում իմ հայրական պատուէրս, երբ Աստուծոյ տաճարի մօտով անցնելու լինիս և տեսնես, որ այնտեղ արդէն ժամերգութիւն է կատարում, մտիր այնտեղ, աղօթիր և դուրս չը գաս, մինչև որ ժամերգութիւնը չը վերջանայ: Որդին խոնարհութիւնով ընդունեց հայրական պատուէրը և ճշգութիւնով կատարում էր նորան: Մի տարի անցնելուց յետոյ, մեծատան կինը մի ինչ որ բանի պատճառաւ, սկսեց ատել նորան և վճռեց, որ ինչպէս լինի, ոչնչացնել տայ նորան: Այդ բանին աւելի օգնեց մի ուրիշ երիտասարդ ստրուկ, մեծատան կնոջ սիրելին: Եւ ահա մի օր պարոնուհին ասում է իւր ամուսնուն. «Ես ստոյդ տեղեկացել եմ, որ մեր նոր ստրուկը վճռել է քեզ սպանելու, հրամալիր նորան պատժելու»: Պարոնը հաւատացած կնոջ խօսքին, նոյն օրը պատահելով քլէական դատարանի նախագահին, ասում է նորան. «Վաղը ես ուղարկելու եմ քեզ մի ստրուկ մի աղլուխի հետ. հրամալիր, որ նորա գլուխը կտրեն և աղլուխի մէջ փաթաթեն, իսկ յետոյ գլխի համար կուղարկեմ մի ուրիշ ստրկի, որին և կը յանձնէք բերելու»: Պարոնը դժբաղտաքար իւր սըտրուկների անունները չէր ասել, թէ ո՞ր բանը ո՞ր ստրուկը պիտի կատարէր: Միւս օրը պարոնը ուղարկում է անմեղ երիտասարդին աղլուխի հետ դա-

տաւորի մօտ: Նա գնում է, չիմանալով, որ այնտեղ իրեն մահն է սպասում: Նա ճանապարհին պիտի անցնէր Աստուծոյ տաճարի մօտով, որտեղ այդ ժամանակ սկսուած էր ժամերգութիւնը: Նա մտաքերելով իւր հայրական պատուէրը, կանգնեց տաճարի դրանը և սկսեց աղօթել և սպասեց մինչև ժամերգութեան վերջանալը: Այդ միջոցին, անհամբեր պարոնուհին, որ շուտ էր ցանկանում տեսնել իւր ատելի ստրկի գլուխը, շուտով իւր սիրելի ստրկին ուղարկեց դատաւորի մօտ, պատուիրելով նորան բերել այն, ինչ որ դատարանում իրեն կըտան: Անցնելով տաճարի մօտով, նա տեսաւ իւր ընկերոջը տաճարի դրանը կանգնած և մօտեցաւ նորան, իսկ նա հարցրեց. «Այդ ո՞ւր ես գնում»: Ուղարկուած ստրուկը պատասխանում է. «Դնում եմ դատաւորի մօտ, պարոնները պահանջում են նորա պատասխանը, ինչի համար, որ քեզ ուղարկել են»: Անմեղ երիտասարդը պատասխանում է. «Ես դատաւորի մօտ դեռ չեմ եղել, ես շատ եմ փափագում մինչև ժամերգութեան վերջը լսել, աղաչում եմ եղբայր, այս աղլուխը տար քեզ հետ դատաւորին իմ փոխարէն, իսկ ժամերգութիւնից յետոյ ես կըգամ քո յետեկից, քո փոխարէն, պատասխանը տանելու»: Ոչնչի կասկած չունենալով պարոնուհու սիրելին, վերցնում է աղլուխը և տանում դատաւորին, իսկ դատաւորը հրամակում է անմիջապէս նորա գլուխը կտրել: Աստուծոյ

տաճարում ժամերգութիւնը վերջանում է և երիտասարդը իրեն խոստման համեմատ գնում է դատաւորի մօտ, պատասխան ստանալու։ Այնտեղ տալիս են նորան աղլուխի մէջ փաթաթած գլուխը։ Չը համարձակուելով բանալ աղլուխը և չիմանալով ինչ կալ նորա մէջ, երիտասարդը բերում է և տալիս իւր պարոններին։ Նորանք զարմանում են տեսնելով մահուան ենթարկուածին կենդանի, իսկ բանալով աղլուխը, սարսափելով տեսնում են իրենց սիրելի ստրկի գլուխը։ Երբ որ գործի հանգամանքը բացւում է, մարդ և կին ակամայից համոզւում են, որ ինքն Աստուած իւր հովանաւորութիւնով պահպանել է անմեղին, իսկ մեղաւորին պատժել։ Եւ նորանք ամեն տեղ փառտբանեցին երկնային արդար դատաւորի դատաստանը։

Ա.Կա դորա նման դարձեալ մի ուրիշ դէպք։ Մի բարեպաշտ քրիստոնեայ սիրում էր յաճախել Աստուծոյ տաճարը, բայց իւր գործերի պատճառաւ, շատ անդամ չէր գնում երեկոյեան ժամերգութիւն լսելու։ Երեկոյեան ժամերգութեան ժամանակ, առանձնապէս տօն օրերին, նա միշտ արձակում էր իւր ծառաներին, իսկ ինքը մնում տանը միայնակ։ Մի անդամ մի կիւրակի օր երեկոյեան ժամերգութեան ժամանակ, լսելով զանկազների ձայնը, քրիստոնեան մտածեց ինքն իրան։ «Դնամ երեկոյեան ժամերգութիւնը լսելու, այսօր Տէրունական տօն է,

իսկ ինչ որ հարկաւոր է անելու, Աստուծով, ժամերգութիւնից յետով էլ կարող կը լինիմ անելու և ժամանակին հասցնելու»։ Եւ գնաց եկեղեցի։ Այդ միջոցներում աւագակներին մէկը, իմանալով այդ մարդու բնութիւնը, որ երեկոյեան միշտ արձակում է իւր ծառաներին եկեղեցի գնալու, իսկ ինքը մնում տանը միայնակ, վճռում է բարձրանալ նորա տունը, սպանել նորան և յափշտակել նորա գանձը։ Մտածած սպանութեան համար, նա իրեն հետ վերցնում է մի երկաթեալ նիգ և դանակ և ուղղում գէպի նորա տունը, բայց որովհետև տան տէրը տանը չէր, գնացել էր տաճարը, գողը միայն կոտրատում է կողպէքները և արկղներից վերցնելով նորա գանձը և մի քանի թանկագին իրեկէններ, անցնում գնում։ Մինչև կէս տարին նոյն այդ գողը մի սպանութիւն գործելու համար ընկնում է դատաստանի ձեռքը և հարցաքննութեան ժամանակ մի առ մի յանձն առնում իւր գործած յանցանքները և այն, որ քրիստոնէի գանձը ինքն է յափշտակել և այն նպատակով գնացել նորա տունը, որ սպանի նորան և կողոպտի տունը։

Այն երիտասարդը, որ ծախուած էր որպէս գերի, այնպէս էլ կողոպտուած տան տէրը, մահից ազատուեցան գլխաւորապէս այն պատճառաւ, որ Աստուծոյ տաճարումն էին գտնուել։ Նորանք, եթէ տաճարը գնացած չը լինէին, անշուշտ կեանքից



զրկուած կը լինէին։ Այսպիսով Աստուած ազատում է այն մարդկանց կեանքը, որոնք յաճախում են իւր տաճարը։

Եթէ ջանասիրութիւնով տաճարը յաճախողներին՝ Աստուած պարգևում է իւր ողորմութիւններն ու բարիքները, շատ անգամ և առանց նորանց խնդրանաց, այն ժամանակ այդ աւելին կը պարզեի նորանց և նորանց խնդրանաց համաձայն և ոչ ոքի չի մերժիլ, եթէ նորանք կը խնդրեն նորանից իւր տաճարում։ Աստուած միշտ լինում է տաճարում, նա տաճարում մարդկանց աւելի մօտ է, քան մի որ և է ուրիշ տեղ։ Այդ պատճառաւ նա այնտեղ մարդկանց խնդիրներն, աղօթքներն աւելի շուտ է լսում, և շուտ էլ նորանց խնդրուածները կատարում, քան դորանց մի այլ տեղ։ Այս դէպքում համարեալ նոյնն է լինում, ինչ որ մարդկանց հետ։ Մի տեղ ապրում էր մի հարուստ ողորմած մարդ, որը մեծ բաւականութիւնով օգնում էր բոլոր կարիք ունեցողներին։ Աղքատների համար նա հալը էր և բարերար։ Նրա պարգևները թափուում էին բոլորի համար, ով որ գալիս էր նորա մօտ, օգնութիւն խնդրելու իւր պակասութիւնների համար։ Մի. աղքատ չուզենալով ներկայանալ նորան, ուղարկում է նորան մի խնդրագիր, նկարագրելով իւր ողբալի գրութիւնը։ Ողորմածը կարդում է նամակը և մտածում։ «Հարկաւոր է այդ աղքատին օգնելու, բայց ամենից առաւել

պէտք է օգնել նորանց, որոնք ամեն օր գալիս են և բաղխում իմ դռները օգնութիւն խնդրելով և թոյլ չեն տալիս հանգիստ հոգւով գունովս անցնել և իրենց աղաչանքներով և գառն արտասուքներով ալեկոծում են հոգիս։ Իսկ նա թող գեռ սպասի, եթէ նորա կարիքներն աւելի սաստիկ լինէին, այն ժամանակ նա ինքն անձամբ կը գար և օգնութիւն կը խնդրէր»։ Եւ աղքատի խնդրը առ ժամանակ լետաձգւում է։ Անցնում է և միւս շաբաթը, ժամանակ է արդէն բաւականութիւն տալու խնդրատուին, բայց այդ միջոցին գալիս են և ուրիշ խնդրողներ ներկայանում և իրենց ցաւերը պատմում ու գթութիւն խնդրում։ Ողորմած հարուստը չի գագարում և սորանց բաւականութիւն տալու, իսկ գրաւոր խնդրողի խնդրը գարձեալ յետաձգւում է անորոշ ժամանակաւ, որովհետեւ ողորմածը ժամանակ չունէր նորան էլ բաւականութիւն տալու։ Նա շրջապատուած էր աղքատներով, որոնք աղիօղորմն ձայնով և հառաչանքներով իրենց ցաւերն էին պատմում և գարման խնդրում, գորանց պէտք էր շուտ ժանապարհել, ասում էր ողորմածը և նորանց կարիքներին համեմատ օգնելով ճանապարհում բոլորին։ Բայց չընայելով այդ ամենին, նա պարտաւոր էր կատարել և իւր անձնական գործերը։ Ահա այսպիսով գրաւոր խնդրողի խնդրը մնալով մնում էր անկատար։ Վերջապէս գրաւոր խնդրողը ինքն ան-

ձամբ գալիս է ողորմածի մօտ և արտասուքն աչքերին պատմում իւր կարիքների, իւր երկար ժամանակեայ համբերութեան և սպասելուն մասին։ Նորա արտասուքները շարժում են ողորմածի սիրտը և նա, չընալելով իւր անձնական գործերի ստիպողական կատարելուն, նոյն բոպէին բաւականութիւն է տալիս նորան։ Այսպէս էլ Աստուծու հետ է լինում։ Տաճարում մարդս ուղղակի կանգնած է Աստուծոյ դէմ առ դէմ, որովհետեւ նա կանգնած է նոյն իրան Աստուծոյ տան մէջ։ Եւ Աստուծուն համելի է, որ մարդս իւր խնդիրների համար գայ ուղղակի իրեն տունը, իրեն մօտ, որպէս որդին իւր հօր մօտ և անձամբ անձին պատմի իւր կարիքների մասին, ինչում պակասութիւն է զգում և գթութիւն հայցի։ Այսպիսով Աստուած իւր տան մէջ աւելի շուտ է բաւականութիւն տալիս մարդու խնդիրներին, քան այդ մի որ և ուրիշ տեղ։ Բացի այդ բոլորից տաճարում կախուած են և շատ սըրբերի պատկերներ, որոնք նահատակուած են եղել Քրիստոսի անուան և ճշմարիտ հաւատալուն պատճառաւ։ Տաճար այցելով մարդը մտքով վերանալով պատկերի վերայ նկարուածի սկզբնատպի առաջ, աղաչում խնդրում է բարեխօս լինել իրեն համար Աստուծոյ առաջ։ Այսպիսով և սուրբ պատկերներն էլ մասամբ օգնում են տաճարը այցելող մարդկանց ցանկութիւնները շուտ կատարուելուն։

Մարդու տաճարում ջերմն աղօթելն անշուշտ կարեոր է և այն պատճառով, որ այնտեղ մարդիկ աղօթում են իրար համար, որովհետև տիրացուն տաճարում բոլոր ներկայ եղողների կողմից խնդրում է նորանց ընդհանուր կարիքների համար, օրինակ հիւանդութիւններից փարատելու, բարկութիւնից ազատելու և բաւականութիւն տալու նորանց կարիքներին։ Հիւանդութիւնները փարատելու, պտուղներին առատութիւն, աշխարհին խաղաղութիւն պարզեցնելու, իսկ հոգեոր պաշտօնեաների միաբերան «Տէր ողորմեա» ասելուց լետոյ, տաճարում եղողները սրտանց և միաբերան խնդրում են Աստուածանից կատարումն տալ այդ խնդիրներին։ Իսկ շատերի միմիսնց համար աղօթելը աւելի զօրաւոր է, և շատ հեշտութիւնով կարելի է Աստուծու գութը շարժեցնել ողորմելու։ Յակովը առաքեալն ասում է. «Աղօթեցէք միմեանց համար, որ բժըշկուիք»։¹⁾ Եւ երբ մարդիկ ամենքը միասին աղօթում են իրենց կարիքների համար, այն ժամանակ երեսում է դորանց եղբայրութեան ընդհանուր համաձայնութիւնը և միմեանց սիրելը և հենց այդբանն է հարկաւոր Աստուծուն և Աստուած տեսնելով իւր ժողովրդի ընդհանուր եղբայրութեան համաձայնութիւնը, սէրը, կատարումն է տալիս նորանց խնդիրներին։ Եղբայրական աղօթքներով անընդունակ է աղօթքների աղօթքներին։

1) Յակովը. գլ. ե. 16

կարելի բանը կարելի է դառնում: Քրիստոսի երկինք համբառնալուց յետով, առաքեալները սկսեցին քրիստոնէական հաւատը տարածել Հայաստանում և ընդհանուր աշխարհում: Հրէաները սաստիկ առում էին Քրիստոսի հետևողներին և ամեն տեղ էլ աշխատում էին խանգարել և հակառակել նորանց առաքելական քարոզներին: Հրէաների Հերովդէս թագաւորը, Հերովդէս հալածչի թոռը, ցանկանալով հրէաներին հաճելի բան անել, նահատակել տուաւ Յակովը առաքեալին, Յովհաննէս Աստուածաբան առաքեալի եղօրը: Իսկ յետոյ շուտով զատկական տօներին նա բռնել տուաւ Պետրոս առաքեալին և ձգեց բանդը, որ զատկական տօներից յետոյ յանձնի ժողովրդի ձեռքը: Բանդում նշանակուած էին ամենախիստ պահապաններ: Պետրոս առաքեալն էլ շղթայուած էր երկու ծանը շղթաներով, նորան պահպանում էին 16 պահապաններ, որոնցից երկուսը քնած էին առաքեալի հետ, նորա երկու կողմերով: Իսկ այդ միջոցին քրիստոնեաները (որոնք այդ ժամանակ գեռ շատ քիչ էին) ամենքը միասին մի տեղ ժողովուած, ջերմն աղօթում էին Աստուծուն Պետրոսին բանդից ազատելու համար: Եւ ահա այն գիշերը, երբ լուսաբացին Հերովդէսը Պետրոսին բանդից պիտի հանէր և յանձնէր ժողովրդի ձեռը, Աստուծոյ հրեշտակը բանդում երևաց Պետրոսին: Յանկարծ բանդը լուսաւորուեց, Պետրոս առաքեալն

ալդ ժամանակ քնած էր: Հրեշտակը զարթեցրեց նորան և ասաց. «Նուտ վեր կաց»: Առաքեալի շըղթաները ինքն իրան վայր ընկան: Հրեշտակը հրամայեց նորան հագնուիլ, գոտին կապել և հետեիլ իրեն: Պետրոս առաքեալը այդ բոլոր հրամանները կատարեց: Նորան թւում էր, թէ այդ երազ է և ոչ իրողութիւն: Բայց շուտով համոզուեց, որ այդ երազ չէ, այլ իրողութիւն: Հրեշտակը նորա հետանցաւ առաջին և երկրորդ պահակների մօտով, յետոյ մօտեցան երկաթեալ դարբասներին, որ տանում էր ուղղակի քաղաքը: Դորանց առաջ գարբասի գըռներն իրենք իրենց բացուեցան: Հրեշտակը և Պետրոս առաքեալը անցան դարբասով և մտան փողոցը: Այդ տեղ հրեշտակն աներևոյթացաւ: Այն ժամանակ Պետրոս առաքեալն ասաց. «Արդարեւ այժմ ես տեսնում եմ, որ Աստուած իւր հրեշտակն ուղարկել է և ինձ ազատել Հերովդէսի ձեռից և այն զարկել է և ինձ ազատել Հերովդէսի ձեռից և այն բոլորից, որին սպասում էին հրէաները»: Պետրոս առաքեալն իւր չորս կողմը դիտելով՝ ուղղուում է դէպի մարիամի տունը (Մարկոս աւետարանչի մայրը), որտեղ քրիստոնեաները ժողովուած աղօթում էին¹⁾ Ահա այսքան զօրեկ է քրիստոնեալ եղբայրների ջերմն աղօթքները: Աստուած նորան շուտ է լսում և նորանց կամքի համեմատ կատարումն տալիս աղօթողների խնդիրներին:

1) Դորձք առաք. գլ. ԺԲ

Յիսուս-Քրիստոս տաճարը կոչում է Աստուծոյ տուն, որ նշանակուած է աղօթելու համար: Նա Երուսալէմի տաճարից հալածելով առևտրականներին ասաց. «Իմ տունս աղօթելու տուն է կոչում, իսկ դուք աւազակների ալր շինեցիք»¹⁾: Ուրեմն եթէ տաճարը Աստուծոյ տունն է, աղօթելու տուն, այն ժամանակ այնտեղ գնացողները պարտաւոր են իշել, թէ ի՞նչու են այնտեղ գնացել, ի՞նչ պէտք է անեն, այնպէս էլ այնտեղի կանգնածները պարտաւոր են չը մոռանալ, որ եկած են աղօթելու համար: Մտաբերելով այդ, մարդիկ տաճարում պիտի աղօթեն Աստուծուն և մտքներով ուղղուին դէպի նորան: Ընդհակառակը մեզանից շատերը, չը նայելով որ տաճարում են կանգնած, այնու ամենայնիւ չեն մոռանում մտածելու իրենց աշխարհային կեանքի, անձնական գործերի մասին, միայն այն ժամանակ են մտաբերում Աստուծուն, երբ տիրացուն բարձրաձայն երգում է: «Աստուծոյ երկրպագեսցուք» կամ քահանան ասում: «Խաղաղութիւն ամենեցուն», այդ ժամանակներում նորանք մտաբերում են, որ պէտք է երկրպագութիւն տալ, ծունը դնել, խաչակնքել անձը, անում են այդ և դարձեալ ընկնում կողմնակի խորին մտածմունքների մէջ, յօրանջում և տաճարի զանազան կողմերը դիտում: Այսպիսով Աստուծոյ տաճարում, աղօթելու տանը, շատ քիչ ենք

1) Դուկաս. գլ. ԺԹ. 46

Աստուծուն մտաբերում և աղօթում և շատ քիչ արտայալտում մեր սրտի զգացումները: Բայց մեղանից շատերը շատ անգամ Աստուծանից ոչինչ չեն ստանում, որովհետեւ շատ անգամ Աստուծոյ տաճարը մեղ համար այնպիսի տեղ ենք դարձնում, որտեղ միայն նայում ենք զանազան կողմերի մարդու միայն նայում ենք զանազան կողմերի մարդու միայն գուրս եկողների և ներս մտնողների վերայ: Ահա կանց դուրս եկողների և ներս մտնողների վերայ: Ահա կանց շարքում կանգնած է մի կին, անշուշտ ուշադրութիւնով նայում է, թէ ինչպէս են հագնուած իրեն հարևան և բարեկամ կանաչքը: Եթէ նուած իրեն հարևան և բարեկամ են նորանց շատերը, նորա կարծիքով, հագուած են իրենից լաւ, զարդարուած են աւելի գեղեցիկ, այն ժամանակ նորա մէջ ինքն լստ ինքեան նախանձ է շարժւում, թէ ի՞նչու չէ ինքն էլ նորանց պէս հագուած ու զարդարուած: Իսկ եթէ ինքը հագուած է շատերից, կամ նոյն իսկ ամենից լաւ, այն ժամանակ հպարտութիւնն է առաջ գալիս: Կինը հպարտանում ու գոռոզանում է, որ ինքն ամենից գերադաս ու գեղեցիկ է զարդարուած ու հագուած: Ահա ժամերգութեան ժամանակ եկեղեցի է մտնում մի որ և է հարուստ մարդ, փառաւոր հագուած և բոլորի հայացքներն ուղղում է դէպի նորան: Քրիստոնեաներն այդ ժամանակ մոռանում են Աստուծուն, անգտմ մոռանում, թէ իրենք որտեղ են կանգնած: Մտքները փոխանակ Աստուծուն ուղղուած են մարդկանց վերայ և շատերի միտքը լսւ, ուղղած են մարդկանց վերայ և շատերի միտքը

շատ երկար, անգամ մինչև ժամերգութեան վերջը
մնում է այդպէս զանազան բաների վերայ ուղղուած։
Մարդիկ այսպիսով Աստուծոյ տաճարը դարձնում
են որպէս զուարձութեան տեղ։ Մենք էլ տաճա-
րում այսպէս շատ անգամ, ամբողջ ժամերգութեան
ժամանակ մտածում ենք մեր երկրային կեանքի,
ապրուստի և գործերի մասին։ Գիւղացին, սերմն
ցանող և հնձող մշակը, ժամերգութեան մեծ մասը
անց է կացնում մտածելով՝ թէ ում վերայ և որքան
օգուտով կարող կը լինի ծախել իւր ցորենը, միւս
տարում առատ ցորեն ստանալու համար, որքան ցո-
րեն ցանել, ի՞նչպէս անել, որ միւս տարուայ համար
մի քանի դեղ խոտ աւելացնել և ծախել։ Ի՞նչ գնով
ծախել անսառւնները և որ անսառւնները պահել,
սերունդը բազմացնելու և այլն։ Վաճառականը մտա-
ծում իւր առեւտրի, վիճակի մասին։ Ժամերգու-
թեան ժամանակ նորան աւելի քաղցր է թւում մտա-
ծել, հոգալ, թէ ի՞նչպէս անել, որ աւելի գնով
ծախուի իւր ապրանքը, ի՞նչպէս անել, որ իւր փո-
ղերը աւելի տոկոսներով շահեցուին, ի՞նչպէս անել,
որ մի ուրիշ աւելի շահաւէտ գործ ձեռնարկել և
այլն։ Զինուորականը, Աստուծոյ ժամերգութեան
ժամանակ մտածում իւր ընկերների և իւր գլխա-
ւորների և պարզեներ ստանալու մասին և այլն։
Եւ վերջապէս մեզանից իւրաքանչիւրը, Աստուծոյ
տաճարում, մտածում իւր այն գործերի վերայ, որով

սարապւում է։ Ժամերգութեան ժամանակ մարդ մի
առանձին քաղցրութիւն է զգում մտածել, խորհել
իւր պարապմուքների մասին։ Ահա մէկ էլ ես տես-
նում մարդու մտքի առաջ են զալիս մի որ և է
խնդիր, դորանից յետոյ միտքը փոխւում է երկրորդ,
երրորդ և չորրորդ խնդիրների վերայ և այսպիսով
մարդս տաճարում անտեղի կերպով մտազբաղութեան
մէջ ընկնելով՝ մէկ խնդրից միւսն անցնելով՝ ժա-
մանակ կորցնում։ Առանձնապէս մարդուն շատ են
զբաղեցնում՝ մտածել տալ աշխարհային կեանքի
խնդիրները, երբեմն մի որ և է գործի պատճառաւ
տիվրուած լինելով՝ կամ սաստիկ ուրախացած։ Զա-
նազան պատահմունքների մասին խնդիրները իրենք
իրենց մտնում են մարդու գլուխը, հէնց որտեղ որ
էլ լինի նա և այդ առաւել Աստուծոյ տաճարում։
Մարդ մտնում է տաճարը, սկսում ծունը գնել, խա-
չակնքել անձը և ազօթել Աստուծուն և ահա խկոյն
մարդից անբաժան կեանքի խնդիրները հէնց ալդ
րոպէին մտնում են նորա գլուխը և որքան նա աշ-
խատում է թողնել այդ մտածմունքները, սակայն
որքան նա աշխատում է, այնքան էլ աւելի են աւե-
լանում մտածմունքները։ Նորանք խումբ, խումբ
իրար յետելից գալիս են և մարդուն կատարելապէս
ընկճում մտածմունքների մէջ։ Ժամերգութիւնը
շարունակ առաջ են տանում և նա կանգնած ոչինչ
չի տեսնում և ոչինչ լսում։ Աստուծուն երբէք հա-

շատ երկար, անդամ մինչև ժամերգութեան վերջը
մնում է այդպէս զանազան բաների վերայ ուղղուած:
Մարդիկ այսպիսով Աստուծոյ տաճարը դարձնում
են որպէս զուարճութեան տեղ: Մենք էլ տաճա-
րում այսպէս շատ անգամ, ամբողջ ժամերգութեան
ժամանակ մտածում ենք մեր երկրային կեանքի,
ապրուստի և գործերի մասին: Գիւղացին, սերմն
ցանող և հեծող մշակը, ժամերգութեան մեծ մասը
անց է կացնում մտածելով՝ թէ ում վերալ և որքան
օգուտով կարող կը լինի ծախել իւր ցորենը, միւս
տարում առատ ցորեն ստանալու համար, որքան ցո-
րեն ցանել, ի՞նչպէս անել, որ միւս տարուայ համար
մի քանի դեզ խոտ աւելացնել և ծախել: Ի՞նչ գնով
ծախել անասունները և որ անասունները պահել,
սերունդը բազմացնելու և այլն: Վաճառականը մտա-
ծում իւր առեւտրի, վիճակի մասին: Ժամերգու-
թեան ժամանակ նորան աւելի քաղցը է թւում մտա-
ծել, հոգալ, թէ ի՞նչպէս անել, որ աւելի գնով
ծախուի իւր ապրանքը, ի՞նչպէս անել, որ իւր փո-
ղերը աւելի տոկոսներով շահեցուին, ի՞նչպէս անել,
որ մի ուրիշ աւելի շահաւետ գործ ձեռնարկել և
այլն: Զինուորականը, Աստուծոյ ժամերգութեան
ժամանակ մտածում իւր ընկերների և իւր գլխա-
ւորների և պարզեներ ստանալու մասին և այլն:
Եւ վերջապէս մեզանից իւրաքանչիւրը, Աստուծոյ
տաճարում, մտածում իւր այն գործերի վերայ, որով

պարապւում է: Ժամերգութեան ժամանակ մարդ մի
առանձին քաղցրութիւն է զգում մտածել, խորհել
իւր պարապմուքների մասին: Ահա մէկ էլ ես տես-
նում մարդու մտքի առաջ են զալիս մի որ և է
խնդիր, գորանից լետոյ միտքը փոխւում է երկրորդ,
երրորդ և չորրորդ խնդիրների վերայ և այսպիսով
մարդս տաճարում անտեղի կերպով մտազբաղութեան
մէջ ընկնելով՝ մէկ խնդրից միւսն անցնելով՝ ժա-
մանակ կորցնում: Առանձնապէս մարդուն շատ են
զբաղեցնում՝ մտածել տալ աշխարհային կեանքի
խնդիրները, երեմն մի որ և է գործի պատճառաւ
տիրուած լինելով՝ կամ սաստիկ ուրախացած: Զա-
նազան պատահմունքների մասին խնդիրները իրենք
իրենց մտնում են մարդու գլուխը, հենց որտեղ որ
էլ լինի նա և այդ առաւել Աստուծոյ տաճարում:
Մարդ մտնում է տաճարը, սկսում ծունը գնել, խա-
չակնքել անձը և աղօթել Աստուծուն և ահա իսկոյն
մարդից անբաժան կեանքի խնդիրները հենց այդ
ըուպէին մտնում են նորա գլուխը և որքան նա աշ-
խատում է թողնել այդ մտածմունքները, սակայն
որքան նա աշխատում է, այնքան էլ աւելի են աւե-
լանում մտածմունքները: Նորանք խումբ, խումբ
իրար յետեկից գալիս են և մարդուն կատարելապէս
ընկճում մտածմունքների մէջ: Ժամերգութիւնը
շարունակ առաջ են տանում և նա կանգնած ոչինչ
չի տեսնում և ոչինչ լսում: Աստուծուն երբէք հա-

Ճելի չէ ալդ տեսակ մարդում տաճարում կանգնելը, այդտեղ աշխարհային կեանքի և այլ խնդիրների մասին մտածելու, խորհելու տեղը չէ։ Տաճարում մարդ իրենից միանգամայն պիտի հեռացնի աշխարհային բաների մասին մտածելը, որովհետեւ նա կանգնած է Աստուծոյ տանը, աղօթելու տան մէջ։ Նա պէտք է մտաբերի, որ ինքն Աստուծոյ տանն է կանգնած, ուրեմն իրեն աւելի մօտ է Աստուծած և պէտք է իրեն այնպիսի մի դիրք տայ, որ որպէս թէ ինքը կանգնած է հէնց Աստուծոյ առաջ։ Այդ պատճառաւ սուրբ եկեղեցին իւր երգիչների բերանով երգում է. «Զգրունս, զգրունս, ամենայն իմաստութեամբ և զգուշութեամբ. 'ի վեր ընծայեցուցէք զմիտս ձեր Աստուծային երկիւղիւ»։ Այսինքն ձեր ականջի և մտքի մարմնաւոր-աշխարհային մտածմունքների գռները փակեցէք և ամեն իմաստութիւնով և զգուշութիւնով և Աստուծոյ երկիւղովը դէպի վեր ընծայեցէք ձեր մտքերը՝ աղօթելով։ Շատ կարելի է մարդս անկարող է գտնւում իրեն ազատել աշխարհային կեանքի վերաբերեալ մտածմունքներից և իրեն արդէն գերի է գարձրած նորան, այն ժամանակ արդէն աւելորդ է, որ նա նեղութիւն է կրում և տաճար գնում։ Այդ տեսակ մարդը միենուն է թէ իսկի տաճարումն էլ չէ։ Նա նմանւում է այն մարդկանց, որոնց համար Աստուծած մարդարէների բերանով ասել է. «Այս ժողովուրդը իրեն բե-

րանովն է մօտենում և շրթունքներովն է ինձ պատում, բայց իրենց սիրան ինձանից հեռացած ջոկուած է։ Զուր տեղն են պաշտում ինձ»։ ¹⁾

Եթէ պահանջւում է, որ տաճարում պէտք է մտքով ու սրտով բարձրանալ դէպի Աստուծած, այդ տւելի պահանջւում է այստեղ կանգնել կարգին և համեստութիւնով։ Այդ պահանջում է տեղի և ժամերգութեան սրբութիւնը։ Իսկ մեզանից շատերը տաճարում ժամերգութեան ժամանակ զրոյցներ են անում, շատ անգամ և հանաքներ և ծիծաղներ։ Այդ մեծ յանցանք է. Պէտք է մտաբերել, որ մենք կանգնած ենք Աստուծոյ տաճարում, երկնային թագաւորի տանը։ Այստեղ նա այցելում է իւր հաւատացեալ ժողովրդին, այստեղ նա գաղտնի նստած է սեղանի վերայ, այստեղ նորան մենք պատարագում ենք, զոհ ենք մատուցանում։ Եթէ երկնային թագաւորի ներկայութեան ժամանակ ամենքն էլ աշխատում են իրենց կարգին պահել, աշխատում են ուշադրութիւնով լսել նորա խօսքերը, ուրեմն այդ աւելի պէտք է անել երկնային թագաւորի ներկայութեան ժամանակ։ Ահա պատարագ ենք մատուցանում։ Այն ժամանակ թագաւորողների թագաւորը, տէրերի տէրը գալիս է իւր հաւատացեալների համար զոհ մատուցանուում։ Նորան աներւոյթ կերպով շրջապատած են երկնային բոլոր

1) Եսայի գլ. ԴԹ. 13. Մատթ. գլ. ՓԵ. 8, 9.

զօրութիւնները, ինչպէս որ եկեղեցին էլ երգում է. «Մարմին տէրունական և արիւն փրկչական կայ առաջի, երկնալին զօրութիւնքն յաներևոյթս երգեն և ասեն անհանգիստ բարբառով, սուրբ, սուրբ, սուրբ տէր զօրութեանց»: Ճշմարիտ հաւատացեալ քրիստոնեան իւր չերմն զգացմունքները, իւր որդիական պարտքը ցոյց տալու համար, պարտառը է տաճարում լուռ ու մունջ և համեստ կանգնել, աղօթել և հետևել ժամերգութեանը, Ա. պատարագին: Մարդ չը պէտք է թոյլ տայ իրեն տաճարում խօսելու, հանաքներ անելու և ծիծաղելու, իսկ եթէ անկարող է գտնուելու այս պարտքերը կատարելու, այն ժամանակ իսկապէս կարիք էլ չը կայ տաճարը գնալու, որովհետեւ ինքն եկեղեցին է իւր սպասաւորների բերանով երգում. «Երկիւղիւ և հաւատով յառաջ մտիք և սրբութեամբ հաղորդեցարուք»: Ալսպիսով եկեղեցին իւր ճշմարիտ հաւատացեալ չերիստոնեան պէտք է իրեն պահպանի երկիւղով և հաւատով:

Նատ անգամ մեզ, քրիստոնեաներիս, աւետարանական կոչուած և ուրիշ աղանդաւորներ արհամարհում են նորա համար, սր մենք տաճարներ ունինք: Նորանց խօսքով Աստուած ամեն տեղ է և հետևաբար կարելի է ամեն տեղ էլ աղօթել Աս-

տուծուն: Աղօթելու համար ունենալ մի որոշեալ տեղ կամ շինութիւն, նորանց կարծիքով այդ յանցանք է, որովհետև գորանով, որպէս թէ մենք մերժում ենք Աստուծոյ ամեն տեղ լինելը: Աղանդաւորները իրենց խօսակցութիւնների մէջ հիմք են ընդունում Պօղոս սրբազն առաքեալի այս խոսքերը. «Աստուած ձեռակերտ տաճարներում չէ ապրում և ոչ էլ մարդկանց ձեռքով է պաշտուում, իբրթէ մի որ և է բանի կարօտ: Նա է ամենքին կեանք և շունչ և ամեն բան տւողը»:¹⁾ Այնպէս էլ նորանք ցոյց են տալիս և այն, որ նախկին քրիստոնեաները, ինչպէս երևում է առաքելական գործերից, աղօթելու համար ժողովում էին ոչ թէ տաճարներում, այլ հասարակ տներում: Դորա դէմ մենք քրիստոնեաներս աղանդաւորներին պիտի պատասխանենք հետևեալը: Ճշմարիտ է, որ Աստուած ամեն տեղ է և ամեն տեղ էլ կարելի է նորան աղօթել: Եւ մենք քրիստոնեաներս ամեն տեղ էլ աղօթում ենք նորան: Աղօթում ենք դաշտերում, անտառներում, տներում և առհասարակ որտեղ որ գտնւում ենք: Մենք չենք պնդում, որ Աստուծուն կարելի է աղօթել միայն տաճարում, բայց չէ՝ որ աղօթելու համար պէտք է վերջապէս քրիստոնեաները ժողովուին մի որ և է տեղ: Աղանդաւորները ժողովում են տներում, իսկ քրիստոնեաները տների փոխարէն

1) Գոլծք առաք. գլ. Ժէ. 24 և 25

տաճարներում։ Բայց մի՞թէ տաճարը վատ է հասարակ տանից։ Ճշմարիտ քրիստոնեաներն էլ կարող են, տաճարների փոխարէն, աղօթելու համար տներում ժողովուիլ, բայց տները վատ են, քան տաճարները։ Տները շինուած են ընտանիքների բնակութեան համար։ Նորանք այնքան մեծ չեն և նորանց մէջ չեն կարող տեղաւորուիլ բոլոր այս կամ այն ծխերի աղօթողները։ Տներն անմաքուր են լինում և այնտեղ է պատրաստում մարդկանց կերակուրը, տներումն են զետեղուում շատ անգամ զիւղացու ընտանի անասունները, այնտեղ են լինում նորա հանգերձեղէնները, տրեխները, վար ու ցանքի բոլոր գործիքները, ցորնի շտեմարանները, մի խօսքով տունը շինուած չէ, որպէս հասարակութեան աղօթելու տեղ։ Իսկ տաճարը, այնպիսի տեղ է, որտեղ կարող են ամբողջ հասարակութիւններ ժողովուիլ և ընդհանրական աղօթքներ կատարել։ Տաճարները միանգամայն յարմարեցրուած են աղօթելու համար, ամեն բան համապատասխան Աստուծոյ մեծութիւնների հետ։ Եւ որ ինքն (Աստուած) ներկայ է լինում աղօթողների մէջ։ Տաճարները գործ ածելու համար նախ օծում են։ Նորա մէջ շինուածէ բեմ, իսկ բեմի վերայ սեղան, որի վերայ Աստուած աներեւոյթ կերպով նստած է։ Մեղանի վերայ է մատուցում անմահ պատարագը, որով հացը և գինին սրբագործւելով դառնում են մեր Տէր

Յիսուս-Քրիստոսի ճշմարիտ մարմինը և արիւնը։ Մեղանի վերայ դրուած են Քրիստոսի յաղթական խաչը, որի վերայ ինքը խաչուեց, տիլամօր սուրբ պատկերը, իւր սիրելի որդին գրկին։ Տաճարում կոխուած են շատ սրբերի պատկերներ, ջահեր, գրուած են աշտանակներ, շամադաններ և այլն։ Այս տեսակ սրբազան անօթներ և պատկանելիքներ հասարակ տներում չեն լինում։ Հասարակ տներում չի էլ կարելի ոչ պատարագ մատուցանել և ոչ ժամերգութիւն կատարել։ Այժմ ինչպէս է թւում ձեզ հաւատացեալ քրիստոնեաներ, աղօթելու համար որտեղ են աւելի գերազաս, հասարակ տները, թէ տաճարները։ Հարկաւ տաճարները։ Պէտք է արհամարհել նորանց, որոնք իրենց աղօթքները կատարում են տներում և ոչ տաճարներում և այդպիսով հասարակ տները համեմատում տաճարների հետ։ Նորանք աւելի մաքուր և համապատասխան աղօթատները թողած, հասարակ տներն են գնում։ Աղօթելու համար ամենայարմար տեղը տաճարն է, քան հասարակ տունը, և շատ անգամ տաճարների շինութեան գործում Աստուած ինքը տեսանելի կերպով օգնում է մարդկանց։ Ահա թէ ինչպէս։ Հայաստան մեր երկրում Աքգար թագաւորից լետոյ, քրիստոնէութիւնը երեք դար շարունակ հալածւում էր, մինչև որ Ս. Գրիգոր Լուսաւորիչը Քրիստոսի յաղթական խաչը ձեռն առած, քարոզե-

լով ճանապարհ բերաւ քրիստոնէական հաւատի հակառակորդներին։ Նորա աշխատանքներն այնպէս արձագանք գտան, որ օրեկան հազարաւոր, մինչև անգամ միլիոնաւոր մարդիկ էին մկրտում։ Թաղէոս և Բարդուղիմէոս առաքեալներից յետոյ, Ս. Գրիգորն էր, որ քրիստոնէական հաւատը տարածեց Հայաստան երկրում։ Նա միայն ինքը չէր յաւաջ տանում այդ գործը, այլ և ունէր բազմաթիւ աշակերտներ, որոնց պատրաստում, ուսում էր տալիս, դաստիարակում և ապա ուղարկում Հայաստանի զանագան կողմերը քրիստոնէական ուսումն ու լոյսը տարածելու։ Մի անգամ Ս. Գրիգորը մի զարմանալի երազ տեսաւ։ Նա տեսաւ, որ երկինքը բացուեց և սկսեց լոյս իշնել երկնքից գէպի երկիրը։ Լոյսի հետ միասին իջաւ մի մարդ, — Աստուծոյ միածին Որդին-ձեռին բռնած մեծ ոսկէ ուռո՞չ չափում։ Այս մարդը սլանալով իջաւ Վաղարշապատ քաղաքի մէջ տեղը և գետնին մուրճով խփեց։ Իսկոյն գետնի տակից՝ անդնդից լսուեցին սարսափելի ձախներ։ Սրանից յետոյ թագաւորի պալատի վերայ ոսկէ խարիսխ երևաց, որի մեծութիւնը մի մեծ ըլըի չափ էր։ Այս խարիսխի վերայ հրեղէն սիւն կար, սիւնի վերայ ամպեղէն գմբէթ, եկեղեցու նման, իսկ գմբէթի վերայ էլ, լուսաւոր խաչ։ Ս. Գրիգորը զարմացած նայում էր և չը գիտէր, թէ ինչ նշանակութիւն ունին այս բոլորը։ Այդ ժամանակ

Աստուծոյ հրեշտակն երկնքից իջաւ, և մեկնեց Ս. Գրիգորին նորա տեսիլը։ Հրեշտակն ասաց—այն մարդը, որ ձեռին ոսկէ ուռո՞ւնէր բռնած՝ Աստուծու որդի Յիսուսն է, հրեղէն սիւնը կաթողիկէ եկեղեցին, այսինքն հիմիկուայ Էջմիածնի տաճարը, իսկ լուսաւոր խաչը՝ Հայոց քահանայապետութիւնն, այսինքն կաթողիկոսութիւնն է։ Հրեշտակը յայտնեց, որ այն ուռով խփած տեղը եկեղեցի պիտի շինել, որ բոլոր քրիստոնեաների համար աղօթատուն լինի և բացի գորանից Հայոց կաթողիկոսի աթոռն այդ տեղ պիտի հաստատուի, այսինքն Հայոց կաթողիկոսներն այդ տեղ պիտի նըստեն։ Միւս օրը սուրբ Գրիգորը այս երազը պատմում է Տրդատ թագաւորին, նախարարներին, ժողովրդին և այդ տեղում 302 թուին մի եկեղեցի շինում, այն ձեռով ինչպէս որ Աստուծ նորան ցոյց էր տուել։ Այս եկեղեցին առաջ Շողակաթ էր կոչւում¹⁾, որովհետեւ լոյսը, այսինքն շողը այդ տեղ կաթեց։ Այժմ այլ ևս Շողակաթ չեն ասում, այլ՝ Էջմիածին, որ նշանակում է թէ այնտեղ իջաւ Միածին, — Յիսուս—Քրիստոսը։ Սուրբ եկեղեցոյ շինութեան վերայ աշխատում էին ոչ թէ միայն ժողովուրդը, այլ և ինքը թագաւորը, Աշխէն թագուհին, թագաւորի որդին, քոլը, նախարարները

1) Այժմ էլ Շողակաթ է կոչւում Ս. Էջմիածնի աստ սեղանը, իսկ միջնակէտը կաթողիկէի՝ իջման տեղ, որի վերայ պատարագ է մատուցանուում Էջմիածնի և ուրիշ հանդիսաւոր տօնելին։

և իշխանները։ Բացի Ս. Եջմիածնից Գրիգորը Հայաստանում նոյն ձեռվ ուրիշ բազմաթիւ եկեղեցիներ էլ չինեց։

Ս. Եջմիածնինը 302 թուից սկսած բոլոր հայերի մայր եկեղեցին է և քահանաւապետական աթոռը։ Այսեղ է նստում Հայոց կաթուղիկոսը, այնտեղ է և Հայաստանեաց առաքելական եկեղեցւոյ վարչական մարմին — Սինօդը։

Այս այսպէս է տաճարների մասին Աստուծոյ կամքը։ Դորա համար ուղղակի կարելի է ասել, որ մարդիկ իրենց համար առանձին աղօթատուն չունենալը յանցանք է։ Որովհետև եթէ մարդիկ հոգում են իրենց տան, բնակարանի մասին, որպէս զի նա աւելի ընդարձակ, մաքուր և յարմարագոյն լինի, այդ աւելի պէտք է անել աղօթատների համար, նորան յարմարեցնելու Աստուծուն աղօթելու համար։ Այդ պատճառաւ տաճարները պէտք է, որքան կարելի է զարդարել և վայելուչ կերպով պահպանել, որպի-հետև նա աղօթատուն է և ոչ բնակութիւն հաս-տատելու համար։ Թէ և Աստուծոյ ինքն ըստ ինք-եան զարդարանքների կարիք չէ զգում, ոչ ոսկու և ոչ արծաթի, որովհետև դորանք առանց նորան էլ իրենն է, սակայն մենք որպէս նորա հարազատ որդիք նորան հաճոյանալու համար, պարտաւոր ենք այդ անելու։ Մեր այդ տեսակ որդիական զգաց-մունքները հաճելի են Աստուծուն։ Հասարակ տան

աղօթելը այնքան յանցանք չէ, որքան յանցանք է աղօթատները չը զարդարելը և մաքուր չը պահելը և աղօթատունը հասարակ տանից չը զանագանելը։ Եթէ առաջին տարուայ քրիստոնեաները աղօթա-տներ չունեին, այլ աղօթելու համար ժողովում էին մասնաւոր տներում, այդ անում էին այն ժա-մանակուայ հանգամանքներից զրդուած։ Իսկ երբ հանգամանքները փոխուեցան և քրիստոնէութիւնն ազատ կրօն դարձաւ, այն ժամանակ բոլոր քրիստոն-եաներն էլիրենց համար սկսեցին առանձին աղօթա-տներ կառուցանել։ Պատահում է երբեմն մեզ էլ այն-պիսի հանգամանք, որ մենք էլ ստիպուած ժողով-ում ենք մասնաւոր տուն՝ աղօթելու և կատա-րելու մեր հասարակական պարտքերը, օրինակ երբ եկեղեցին այրում է և նախ քան նոր եկեղեցի կառուցանելը հարկադրուած ենք մասնաւոր տուն ժողովուելու։

Այսպիսով իւրաքանչիւր քրիստոնեալի համար սրբազն պարտք է միշտ Աստուծոյ տաճարը գնա-լու և մասնակցելու հասարակական աղօթքներին։

ՎԵՐՋ



Աղջուկի ծագութեան պահին քանի որ
Եվրոպի ազգան մասնաւորութեան պահին պահ
Արևմտայաց ազգան ժամանակակից մասն է
այս պահանջանական ու օգտական էլեկ-
տրոնական գույքը ու աշխատանքը ու առ-
անձնական աշխատանքը ու առանձնական աշխա-
տանքը ու աշխատանքը ու առանձնական աշխա-

504

505
mp

ՀՅ Ազգային գրադարան



NL0596123

